Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված

Կ-050-23.09.2021-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ
«ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կենդանական աշխարհի մասին» 2000 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-52 օրենքի (այսուհետ՝ Օրենք) նախաբանում «բացառիկ սեփականությունն է» բառերը փոխարինել «սեփականությունն է, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:» բառերով:

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում՝

1) երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«**էկոհամակարգ**՝ բույսերի, կենդանիների, սնկերի և միկրոօրգանիզմների համակեցությունների, ինչպես նաև դրանց ոչ կենդանի շրջակա միջավայրի դինամիկ համալիր, որոնք փոխազդում են որպես միասնական գործառնական ամբողջություն. »,

2) ութերորդ պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«**կենդանական աշխարհի պաշարներ**՝ աշխարհագրական որոշակի տարածքում հաշվառված կենդանական աշխարհի օգտագործման ենթակա ընդհանուր քանակություն.»,

3) 2-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններ՝

«արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ կենդանական աշխարհի կադաստրի տվյալների հիման վրա, սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ շահույթ ստանալու նպատակով.

առողջապահական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ առողջապահության բնագավառում լիցենզավորված կազմակերպությունների կողմից կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում դեղանյութերի, պատրաստուկների և այլ պրեպարատների ստացման նպատակով.

բնապահպանական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ վտանգված, հազվագյուտ կամ կենդանական աշխարհի առանձին տեսակների պահպանության, թվաքանակի ավելացման, վերարտադրության կազմակերպման (բացառությամբ որսորդական տնտեսությունների) և այլ միջոցառումների (էկոհամակարգերի վերականգնման) իրականացման միջոցով դրանց օգտագործում վայրի բնություն բաց թողնելու կամ վերաբնակեցնելու նպատակով,

գիտահետազոտական, կրթական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ կենդանական աշխարհն ուսումնասիրող սուբյեկտների կողմից կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում գիտական ուսումնասիրությունների, բացահայտումների, գիտաճանաչողության, ուսումնական, կրթական, դաստիարակչական միջոցառումների իրականացման նպատակով,

գյուղատնտեսական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում սելեկցիոն նպատակներով,

ինվազիվ՝ օտարածին կենդանական տեսակներ՝ տեսակներ, որոնք ներմուծվել են երկրագնդի այլ տարածաշրջաններից բնական երևույթների հետևանքով կամ մարդու տնտեսական գործունեության արդյունքում, կամ ներթափանցել են մերձակա երկրներից իրենց համար ոչ բնական կամ օտար հանդիսացող միջավայր և հարմարվելով կարող են վնաս հասցնել էկոհամակարգերին, կենսաբազմազանությանը, կամ կարող են վտանգել մարդու առողջությունը.

կարևոր թռչնաբանական տարածքներ՝ թռչունների պահպանության համար առանձնացված (բնության հատուկ պահպանվող տարածքներից դուրս կամ դրանց մեջ ներառված) բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքներ, որոնք ծառայում են թռչունների բնադրման, ձմեռման կամ հանգստի համար.

կենդանական ռեսուրս՝ կենդանական տեսակների, պոպուլյացիաների և համակեցությունների ամբողջականություն, որն ուղղակի կամ անուղղակի ձևով կարող է օգտագործվել մարդու տնտեսական գործունեության ընթացքում և հանդիսանում է սպառվող-վերականգնվող ռեսուրս.

4) 7-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն՝

«կենդանական աշխարհի օբյեկտների մոնիտորինգ՝ կենդանական աշխարհի վիճակի գնահատման, մարդածին և բնածին բացասական ազդեցությունների կանխատեսման և կանխարգելման, մարդածին և բնածին դրական ազդեցությունների ռեժիմային դիտարկումների գործընթաց.».

5) 13-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«սոցիալական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ կենդանական աշխարհի կադաստրի տվյալների հիման վրա, սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ սպորտային ձկնորսության կամ սիրողական ձկնորսության կամ սպորտային որսի կամ սիրողական որսի կամ հաղթանշանային որսի իրականացում անձնական կարիքների համար՝ առանց շահույթ ստանալու.»,

6) 14-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«վերարտադրության կազմակերպման նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ բնական և ոչ բնական պայմաններում կենդանական աշխարհի օբյեկտների վերարտադրության կազմակերպում որսորդական տնտեսություններում՝ դրանց կայուն օգտագործման, օգտագործման ենթակա թվաքանակի ապահովման նպատակով:»:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածի «Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ» բառերը փոխարինել «այլ իրավական ակտերով:» բառերով:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «դ» կետն ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «գ1», «գ2», «գ3», «գ4» և «գ5» կետեր՝

«գ1) գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգի սահմանում.

գ2) սոցիալական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգի սահմանում.

գ3) կենդանիների թվաքանակի կարգավորման միջոցառումների անցկացման կարգի սահմանում.

գ4) վայրի կենդանիների ազատ պայմաններում վերաբնակեցման կարգի սահմանում.

գ5) բնապահպանական, գիտահետազոտական, կրթական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգի սահմանումը.»:

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «բ1», «բ2», «բ3», «զ1», «զ2», «զ3», «ե1», «ե2», «ե3», «զ1», «զ2», «է1», «է2», «է3», «ը1», «թ4» և «թ5» կետեր՝

«բ1) անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների հաշվառման կարգի սահմանում.

բ2) անազատ և կիսաազատ պայմաններում պահման թույլտվություն չպահանջող վայրի կենդանիների ցանկի հաստատում.

բ3) կրկեսներում օգտագործման համար արգելված վայրի կենդանիների ցանկի հաստատում.

գ1) անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու թույլտվության տրամադրման կարգի սահմանում.

գ2) կիսաազատ պայմաններում պահվող՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների, սկսած երկրորդ կենսունակ սերնդից օգտագործման կարգի սահմանում.

գ3) վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների, դրանց արասիքների և մասերի առք ու վաճառքի իրականացման վայրերին ներկայացվող պահանջների և պայմանների սահմանում.

ե1) վայրի կենդանիների, դրանց արգասիքների, կենդանաբանական հավաքածուների և առանձին նմուշների Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման թույլտվությունների, լիցենզիաների տրամադրում.

ե2) կենդանաբանական հավաքածուների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և գրանցման կարգի սահմանում.

ե3) Կենդանական աշխարհն ուսումնասիրող սուբյեկտների կողմից կենդանական աշխարհի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգի սահմանում.

զ1) Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների օգտագործման կարգի սահմանում.

զ2) վայրի կենդանիների ազատ պայմաններում վերաբնակեցման թույլտվության տրամադրման կարգի սահմանում և տրամադրում.

է1) ինվազիվ՝ օտարածին կենդանական տեսակների տարածվածության ուսումնասիրություն, դրանց ներմուծման, օգտագործման նկատմամբ հասարակության իրազեկության բարձրացման աշխատանքների իրականացում.

է2) ինվազիվ՝ օտարածին կենդանական տեսակների ցանկի հաստատում.

է3) կարևոր թռչնաբանական տարածքների որոշման չափորոշիչների սահմանում.

թ4) բնապահպանական, գիտահետազոտական, կրթական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման պայմանագրի և հայտի օրինակելի ձևերի հաստատում.

թ5) Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների օգտագործման պայմանագրի և հայտի օրինակելի ձևերի հաստատում.»:

2) «է» կետը ուժը կորցրած ճանաչել:

3) «ը» կետում «օգտագործման նորմատիվների» բառերը փոխարինել «օգտագործման ենթակա չափաքանակների» բառերով»:

Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածի «գ» կետում «հուշարձաններ)» բառից հետո լրացնել «, ինչպես նաև կարևոր թռչնաբանական տարածքների» բառեր:

Հոդված 7. Օրենքի 9-րդ հոդվածի «դ» և «ե» կետերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «գ» կետում «իրավաբանական անձինք» բառերից հետո լրացնել «, որոնց կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան կամ նպատակները ներառում են կենդանական աշխարհի օբյեկտների ուսումնասիրությունը կամ որոնք պայմանագրեր են կնքել կենդանական աշխարհի օբյեկտների ուսումնասիրության ոլորտում մասնագիտական որակավորում ունեցող անձանց հետ (ներառյալ աշխատանքային պայմանագրերը).բառեր,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս.

«Կենդանական աշխարհն ուսումնասիրող սուբյեկտները պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 1-ը լիազորված մարմնին տրամադրել կենդանական աշխարհի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ նախորդ տարվա տեղեկատվությունը:»:

Հոդված 9. Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասում «դուրսգրման» բառից հետո լրացնել «, ինչպես նաև նոր հայտնաբերված պոպուլյացիաների կենդանիների Կարմիր գրքում գրանցման» բառեր:

Հոդված 10. Օրենքի 15-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «միջոցառումներ» բառից հետո լրացնել «, հաշվի առնելով սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված սուբյեկտների կողմից ներկայացված ուսումնասիրության արդյունքները» բառեր,

2) 2-րդ մասում «չպետք է պատճառեն» բառերից հետո լրացնել «այդ տեսակի ընդհանուր պոպուլյացիային, » բառեր,

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կենդանիների թվաքանակի կարգավորման միջոցառումների անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 11. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում.

1) «ա» կետում «բազմազանության» բառից հետո լրացնել «, նրանց պոպուլյացիաների և ապրելավայրերի» բառեր,

2) «զ» կետում «աղետներից» բառից հետո լրացնել «,ինչպես նաև ինվազիվ՝ օտարածին կենդանական տեսակներից» բառերը:

Հոդված 12. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում.

1) «գ» կետում «օրգանիզմների» բառից հետո լրացնել «, լիազոր մարմնի կողմից հաստատված ցանկում ընդգրկված ինվազիվ՝ օտարածին կենդանական տեսակների» բառեր,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ե» կետ.

«ե) Հայաստանի Հանրապետությունում լիազորված մարմնի կողմից հաստատված ցանկում ընդգրկված վայրի կենդանական տեսակների օգտագործումը կրկեսներում:»:

Հոդված 13. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« Կենդանաբանական հավաքածուներ ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք պարտավոր են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 1-ը լիազորված մարմնին տրամադրել իրենց մոտ պահվող կենդանաբանական հավաքածուների վերաբերյալ նախորդ տարվա տեղեկատվությունը:»:

Հոդված 14. Օրենքի 21-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական և բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ կոնվենցիա) հավելվածներում ընդգրկված վայրի կենդանական տեսակների, դրանց մասերի և ածանցյալների Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանումը կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումն իրականացվում է լիազորված մարմնի թույլտվությամբ՝ կոնվենցիայով սահմանված պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Վայրի կենդանիների, դրանց արգասիքների, կենդանաբանական հավաքածուների և առանձին նմուշների Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանումը կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումն իրականացվում է դրանց ծագումը և ձեռքբերումը (հավաք, որս, մթերում, գնում և այլն) հաստատող փաստաթղթերի հիման վրա լիցենզիայով՝ Հայաստանի Հանրապետությունից երրորդ երկրներ արտաքին առևտրային գործունեության դեպքում (տրվում է արտաքին տնտեսական գործարքի հիման վրա, որի առարկան է հանդիսանում լիցենզավորման ենթակա ապրանքը և, որը տալիս է իրավունք սահմանված քանակով տվյալ ապրանքի արտահանման կամ ներմուծման համար) կամ լիազորված մարմնի թույլտվությամբ՝ մնացած բոլոր դեպքերում՝ սույն օրենքով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով սահմանված կարգով:

Վայրի կենդանիների, դրանց արգասիքների, կենդանաբանական հավաքածուների կամ առանձին նմուշների Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման թույլտվության տրամադրման համար վճարվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով:»:

Հոդված 15. Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) «գ» կետից հանել «և գեղագիտական» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ե» կետ՝

«ե) առողջապահական , վերարտադրության կազմակերպման նպատակով».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս.

«Արգելվում է սույն հոդվածի առաջին մասի կետերով սահմանված օգտագործման նպատակներից բացի այլ նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը (վայրի բնությունից վերցնելը):»:

Հոդված 16. Օրենքի 24-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս.

«Կենդանական աշխարհի օբյեկտների գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով օգտագործման պայմանագրերի կնքման համար գանձվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով:»:

Հոդված 17. Օրենքի 25-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածները շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«**Հոդված 25. Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը սոցիալական նպատակներով**

Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը սոցիալական նպատակներով վճարովի է (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի):

Կենդանական աշխարհի օբյեկտների սոցիալական նպատակներով օգտագործումն իրականացվում է լիազորված մարմնի հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Պայմանագրեր կնքելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Կենդանական աշխարհի օբյեկտների սոցիալական նպատակներով օգտագործման պայմանագրերի կնքման համար գանձվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով:

Հոդված 26. Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը բնապահպանական, գիտահետազոտական, կրթական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով

Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը գիտահետազոտական և կրթական նպատակներով անվճար է:

Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը բնապահպանական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով վճարովի է:

Կենդանական աշխարհի օբյեկտների բնապահպանական, գիտահետազոտական, կրթական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով օգտագործումն իրականացվում է լիազորված մարմնի հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

Պայմանագրեր կնքելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհի օբյեկտների բնապահպանական, գիտահետազոտական, կրթական, առոջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով օգտագործման պայմանագրերի կնքման համար գանձվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով:

Հոդված 27. Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների օգտագործումը

Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների օգտագործումը թույլատրվում է բացառիկ դեպքերում՝ գիտահետազոտական, բնապահպանական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով՝ լիազորված պետական մարմնի հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների օգտագործումը գիտահետազոտական նպատակներով անվճար է:

Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների օգտագործումը բնապահպանական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով վճարովի է:

Պայմանագրեր կնքելու կարգը սահմանում է լիազորված մարմինը:

Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների օգտագործման պայմանագրերի կնքման համար գանձվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով:»:

Հոդված 18. Օրենքի 27.1- ին հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիները համարակալվում և նույնականացվում են՝ հաշվի առնելով դրանց տեսակային առանձնահատկությունները:»:

2) 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«Անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիները, պահվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից սույն օրենքի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան:

Անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ (բացառությամբ լիազորված մարմնի կողմից հաստատած պահման թույլտվություն չպահանջող վայրի կենդանիների ցանկում ընդգրկված կենդանիներ) պահելը իրականացվում է լիազորված մարմնի կողմից տրամադրված թույլտվության հիման վրա: Թույլտվության տրամադրման կարգը սահմանում է լիազորված մարմինը: Անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու թույլտվություն տրամադրելու համար գանձվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով:

Հայաստանի Հանրապետությունում առանց լիազորված մարմնի թույլտվության արգելվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելը, բացառությամբ լիազորված մարմնի կողմից հաստատած պահման թույլտվություն չպահանջող վայրի կենդանիների ցանկում ընդգրկված կենդանիների:»:

4) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Անազատ և կիսաազատ պայմաններում լիազորված մարմնի թույլտվությամբ պահվող վայրի կենդանիները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիները սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված անձանց կողմից յուրաքանչյուր տարի հաշվառվում և հաշվառման տվյալները տրամադրվում են լիազորված մարմնին՝ համաձայն լիազորված մարմնի կողմից հաստատված կարգի: Հաշվառման տվյալները ենթակա են պարտադիր հրապարակման լիազորված մարմնի կայքէջում տեղադրելու միջոցով:».

5) 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 19. Օրենքի 27.2-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիները կարող են օգտագործվել սույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված օգտագործման տեսակներին համապատասխան:».

2) 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Կիսաազատ պայմաններում պահվող՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների, սկսած երկրորդ կենսունակ սերնդից օգտագործումն իրականացվում է լիազորված մարմնի թույլտվությամբ՝ սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Կիսաազատ պայմաններում պահվող՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների, սկսած երկրորդ կենսունակ սերնդից օգտագործման նպատակով լիազորված մարմնի կողմից տրամադրված թույլտվության համար գանձվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով:

Կիսաազատ պայմաններում պահվող՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիները, սկսած երկրորդ կենսունակ սերնդից օգտագործման ենթակա քանակությունը, համարվում է օգտագործողի սեփականությունը և կարող է օգտագործվել սույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված օգտագործման տեսակներին համապատասխան:

Օրինական ճանապարհով ձեռք բերված անազատ պայմաններում պահվող վայրի կենդանիները համարվում են ձեռք բերողի սեփականությունը:».

4) 4-րդ և 7-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել.

5) հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «8.», «9.», «10.» մասեր՝

« 8. Վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ (բացառությամբ լիազորված մարմնի կողմից հաստատած պահման թույլտվություն չպահանջող վայրի կենդանիների ցանկում ընդգրկված կենդանիների) կարող են ձեռք բերել լիազոր մարմնի կողմից անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ պահելու թույլտվություն ստացած իրավաբանական կամ ֆիզիկական անձինք, կամ այդպիսի թույլտվություն ստացած իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ վայրի կենդանիներ պահելու պայմանագիր ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք:

9. Վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների առք ու վաճառքն իրականացվում է վայրի կենդանիների կենսաբանական, անհատական և տեսակային առանձնահատկություններից բխող ու գոյատևման համար անհրաժեշտ կարիքները բավարարող պայմաններում: Վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների, դրանց արգասիքների և մասերի առք ու վաճառքն իրականացվում է լիազորված մարմնի կողմից սահմանված պայմաններն ու պահանջները բավարարող վայրերում:

10. Վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեղափոխումն իրականացվում է վայրի կենդանիների կենսաբանական, անհատական և տեսակային առանձնահատկություններից բխող ու գոյատևման համար անհրաժեշտ կարիքները բավարարող փոխադրամիջոցներով:»:

Հոդված 20. Օրենքի 32-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 32. Կենդանական աշխարհի մասին օրենսդրության պահանջների կատարման վերահսկողությունը

Կենդանական աշխարհի մասին օրենսդրության պահանջների կատարման վերահսկողությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:»:

Հոդված 21. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 22. Անցումային դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում, անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահող իրավաբանական կամ ֆիզիկական անձիք (անկախ տվյալ

կենդանու ձեռքբերումը հավաստող փաստաթղթի առկայությունից) պարտավոր են դիմել լիազորված մարմին անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու թույտվություն ստանալու և դրանց հաշվառման տվյալները լիազորված մարմնին տրամադրելու համար:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում, անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից լիազորված պետական մարմնից դրանց պահման թույլտվություն չստանալու կամ դրանց հաշվառման տվյալները լիազորված մարմնին չտրամադրելու դեպքում նրանց գործունեությունը համարվելու է առանց թույլտվության իրականացրած գործունեություն և կիրառվելու են օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ:

3. Սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո Կառավարությունը ընդունում է՝

1) գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգը՝ մեկ տարվա ընթացքում,
2) սոցիալական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգը՝ վեց ամսվա ընթացքում,
3) կենդանիների թվաքանակի կարգավորման միջոցառումների անցկացման կարգը՝ երկու տարվա ընթացքում,
4) վայրի կենդանիների ազատ պայմաններում վերաբնակեցման կարգը՝ երկու տարվա ընթացքում,
5) բնապահպանական, գիտահետազոտական, կրթական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգը՝ երեք տարվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

«ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կենդանական աշխարհի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2000 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-52 օրենքի (այսուհետ՝ Օրենք) նախաբանում «բացառիկ սեփականությունն է» բառերը փոխարինել «սեփականությունն է, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:» բառերով:

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում՝

7) երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«**էկոհամակարգ**՝ բույսերի, կենդանիների, սնկերի և միկրոօրգանիզմների համակեցությունների, ինչպես նաև դրանց ոչ կենդանի շրջակա միջավայրի դինամիկ համալիր, որոնք փոխազդում են որպես միասնական գործառնական ամբողջություն. »,

8) ութերորդ պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«**կենդանական աշխարհի պաշարներ**՝ աշխարհագրական որոշակի տարածքում հաշվառված կենդանական աշխարհի օգտագործման ենթակա ընդհանուր քանակություն.»,

9) 2-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններ՝

«արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ կենդանական աշխարհի կադաստրի տվյալների հիման վրա, սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ շահույթ ~~հետապնդելու~~ ստանալու նպատակով.

առողջապահական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ առողջապահության բնագավառում լիցենզավորված կազմակերպությունների կողմից կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում դեղանյութերի, պատրաստուկների և այլ պրեպարատների ստացման նպատակով.

բնապահպանական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ վտանգված, հազվագյուտ կամ կենդանական աշխարհի առանձին տեսակների պահպանության, թվաքանակի ավելացման, վերարտադրության կազմակերպման (բացառությամբ որսորդական տնտեսությունների) և այլ միջոցառումների (էկոհամակարգերի վերականգնման) իրականացման միջոցով ~~վտանգված, հազվագյուտ կամ կենդանական աշխարհի առանձին տեսակների~~ ~~օգտագործում՝ դրանց~~ դրանց օգտագործում վայրի բնություն բաց թողնելու կամ վերաբնակեցնելու նպատակով,

գիտահետազոտական, կրթական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ կենդանական աշխարհն ուսումնասիրող սուբյեկտների կողմից կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում գիտական ուսումնասիրությունների, բացահայտումների, գիտաճանաչողության, ուսումնական, կրթական, դաստիարակչական միջոցառումների իրականացման նպատակով,

գյուղատնտեսական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում սելեկցիոն նպատակներով,

ինվազիվ՝ օտարածին կենդանական տեսակներ՝ տեսակներ, որոնք ներմուծվել են երկրագնդի այլ տարածաշրջաններից բնական երևույթների հետևանքով կամ մարդու տնտեսական գործունեության արդյունքում, կամ ներթափանցել են մերձակա երկրներից իրենց համար ոչ բնական կամ օտար

հանդիսացող միջավայր և հարմարվելով կարող են վնաս հասցնել էկոհամակարգերին, կենսաբազմազանությանը, կամ կարող են վտանգել մարդու առողջությունը.

կարևոր թռչնաբանական տարածքներ՝ թռչունների պահպանության համար առանձնացված (բնության հատուկ պահպանվող տարածքներից դուրս կամ դրանց մեջ ներառված) բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքներ, որոնք ծառայում են թռչունների բնադրման, ձմեռման կամ հանգստի համար.

կենդանական ռեսուրս՝ կենդանական տեսակների, պոպուլյացիաների և համակեցությունների ամբողջականություն, որն ուղղակի կամ անուղղակի ձևով կարող է օգտագործվել մարդու տնտեսական գործունեության ընթացքում և հանդիսանում է սպառվող-վերականգնվող ռեսուրս.

10) 7-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն՝

«կենդանական աշխարհի օբյեկտների մոնիտորինգ՝ կենդանական աշխարհի վիճակի գնահատման, մարդածին և բնածին բացասական ազդեցությունների կանխատեսման և կանխարգելման, մարդածին և բնածին դրական ազդեցությունների ռեժիմային դիտարկումների գործընթաց.».

11) 13-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«սոցիալական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ կենդանական աշխարհի կադաստրի տվյալների հիման վրա, սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ սպորտային~~ և սիրողական ձկնորսության, սպորտային, սիրողական և հաղթանշանային որսի, անձնական կարիքների համար՝ առանց շահույթ հետապնդելու ձկնորսության կամ սիրողական ձկնորսության կամ սպորտային որսի կամ սիրողական որսի կամ հաղթանշանային որսի իրականացում~~ անձնական կարիքների համար՝ առանց շահույթ ստանալու.»,

12) 14-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«վերարտադրության կազմակերպման նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործում՝ բնական և ոչ բնական պայմաններում կենդանական աշխարհի օբյեկտների վերարտադրության կազմակերպում որսորդական տնտեսություններում՝ դրանց կայուն օգտագործման, օգտագործման ենթակա թվաքանակի ապահովման նպատակով:»:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածի «Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ» բառերը փոխարինել «այլ իրավական ակտերով:» բառերով:

Հոդված ~~3~~ 4. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «դ» կետն ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «զ1», «զ2», «զ3», «զ4» և «զ5» կետեր՝

«զ1) գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգի սահմանում.

զ2) սոցիալական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգի սահմանում.

զ3) կենդանիների թվաքանակի կարգավորման միջոցառումների անցկացման կարգի սահմանում.

զ4) վայրի կենդանիների ազատ պայմաններում վերաբնակեցման կարգի սահմանում.

զ5) բնապահպանական, գիտահետազոտական, կրթական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգի սահմանումը.»:

Հոդված ~~4~~ 5. Օրենքի 6-րդ հոդվածում՝

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «բ1», «բ2», «բ3», «զ1», «զ2», «զ3», «ե1», «ե2», «ե3», «զ1», «զ2», ~~«զ3»,~~ «է1», «է2», «է3», «ը1», «թ4» և «թ5» կետեր՝

«բ1) անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների հաշվառման կարգի սահմանում.

բ2) անազատ և կիսաազատ պայմաններում պահման թույլտվություն չպահանջող վայրի կենդանիների ցանկի հաստատում.

բ3) կրկեսներում օգտագործման համար արգելված վայրի կենդանիների ցանկի հաստատում.

գ1) անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու թույլտվության տրամադրման կարգի սահմանում.

գ2) կիսաազատ պայմաններում պահվող՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների, սկսած երկրորդ կենսունակ սերնդից օգտագործման կարգի սահմանում.

գ3) վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների, դրանց արասիքների և մասերի առք ու վաճառքի իրականացման վայրերին ներկայացվող պահանջների և պայմանների սահմանում.

ե1) վայրի կենդանիների, դրանց արգասիքների, կենդանաբանական հավաքածուների և առանձին նմուշների Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման ~~և~~/կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման թույլտվությունների, լիցենզիաների տրամադրում.

ե2) կենդանաբանական հավաքածուների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և գրանցման կարգի սահմանում.

ե3) Կենդանական աշխարհն ուսումնասիրող սուբյեկտների կողմից կենդանական աշխարհի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգի սահմանում.

զ1) Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների օգտագործման կարգի սահմանում.

զ2) վայրի կենդանիների ազատ պայմաններում վերաբնակեցման թույլտվության տրամադրման կարգի սահմանում և տրամադրում.

~~զ3) վայրի կենդանիների ազատ պայմաններում վերաբնակեցման թույլտվության տրամադրում.~~

է1) ինվազիվ՝ օտարածին կենդանական տեսակների տարածվածության ուսումնասիրություն, դրանց ներմուծման, օգտագործման նկատմամբ հասարակության իրազեկության բարձրացման աշխատանքների իրականացում.

է2) ինվազիվ՝ օտարածին կենդանական տեսակների ցանկի հաստատում.

է3) կարևոր թռչնաբանական տարածքների որոշման չափորոշիչների սահմանում.

թ4) բնապահպանական, գիտահետազոտական, կրթական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման պայմանագրի և հայտի օրինակելի ձևերի հաստատում.

թ5) Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների օգտագործման պայմանագրի և հայտի օրինակելի ձևերի հաստատում.»:

2) «է» կետը ուժը կորցրած ճանաչել:

3) «ը» կետում «օգտագործման նորմատիվների» բառերը փոխարինել «օգտագործման ենթակա չափաքանակների» բառերով»:

Հոդված ~~5~~ 6. Օրենքի 7-րդ հոդվածի «գ» կետում «հուշարձաններ)» բառից հետո լրացնել «, ինչպես նաև կարևոր թռչնաբանական տարածքների» բառեր:

Հոդված ~~6~~ 7. Օրենքի 9-րդ հոդվածի «դ» և «ե» կետերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~7~~ 8. Օրենքի 11-րդ հոդվածում՝

3) 1-ին մասի «գ» կետում «իրավաբանական անձինք» բառերից ~~առաջ~~ հետո լրացնել «~~համապատասխան մասնագիտական կարողություններ ունեցող~~, որոնց կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան կամ նպատակները ներառում են կենդանական աշխարհի օբյեկտների ուսումնասիրությունը կամ որոնք պայմանագրեր են կնքել կենդանական աշխարհի օբյեկտների

ուսումնասիրության ոլորտում մասնագիտական որակավորում ունեցող անձանց հետ (ներառյալ աշխատանքային պայմանագրերը).» բառեր,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս.

«Կենդանական աշխարհն ուսումնասիրող սուբյեկտները պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 1-ը լիազորված մարմնին տրամադրել կենդանական աշխարհի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ նախորդ տարվա տեղեկատվությունը:»:

Հոդված ~~8~~ 9. Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասում «դուրսգրման» բառից հետո լրացնել «, ինչպես նաև նոր հայտնաբերված պոպուլյացիաների կենդանիների Կարմիր գրքում գրանցման» բառեր:

Հոդված ~~9~~ 10. Օրենքի 15-րդ հոդվածի՝

4) 1-ին մասում «միջոցառումներ» բառից հետո լրացնել «, հաշվի առնելով ~~գիտական և մասնագիտական կազմակերպությունների եզրակացությունները~~ սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված սուբյեկտների կողմից ներկայացված ուսումնասիրության արդյունքները» բառեր,

5) 2-րդ մասում «չպետք է պատճառեն» բառերից հետո լրացնել «այդ տեսակի ընդհանուր պոպուլյացիային, » բառեր,

6) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կենդանիների թվաքանակի կարգավորման միջոցառումների անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված ~~10~~ 11. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում.

3) «ա» կետում «բազմազանության» բառից հետո լրացնել «, նրանց պոպուլյացիաների և ապրելավայրերի» բառեր,

4) «գ» կետում «աղետներից» բառից հետո լրացնել «,ինչպես նաև ինվազիվ՝ օտարածին կենդանական տեսակներից» բառերը:

Հոդված ~~11~~ 12. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում.

1) «գ» կետում «օրգանիզմների» բառից հետո լրացնել «, լիազոր մարմնի ~~ցանկով հաստատված~~ կողմից հաստատված ցանկում ընդգրկված ինվազիվ՝ օտարածին կենդանական տեսակների» բառեր,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ե» կետ.

«ե) Հայաստանի Հանրապետությունում լիազորված մարմնի կողմից հաստատված ցանկում ընդգրկված վայրի կենդանական տեսակների օգտագործումը կրկեսներում:»:

Հոդված ~~12~~ 13. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« Կենդանաբանական հավաքածուներ ունեցող ~~Ի~~ իրավաբանական ~~և~~ կամ ֆիզիկական անձինք պարտավոր են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 1-ը լիազորված մարմնին տրամադրել իրենց մոտ պահվող կենդանաբանական հավաքածուների վերաբերյալ նախորդ տարվա տեղեկատվությունը:»:

Հոդված ~~13~~ 14. Օրենքի 21-րդ հոդվածում՝

6) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական և բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ կոնվենցիա) հավելվածներում ընդգրկված վայրի կենդանական տեսակների, դրանց մասերի և ածանցյալների Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանումը ~~և~~/կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումն իրականացվում է լիազորված մարմնի թույլտվությամբ՝ կոնվենցիայով սահմանված պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

7) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Վայրի կենդանիների, դրանց արգասիքների, կենդանաբանական հավաքածուների և առանձին նմուշների Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանումը ~~և~~/կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումն իրականացվում է դրանց ծագումը և ձեռքբերումը (հավաք, որս, մթերում, գնում և

այլն) հաստատող փաստաթղթերի հիման վրա լիցենզիայով՝ Հայաստանի Հանրապետությունից երրորդ երկրներ արտաքին առևտրային գործունեության դեպքում (տրվում է արտաքին տնտեսական գործարքի հիման վրա, որի առարկան է հանդիսանում լիցենզավորման ենթակա ապրանքը և, որը տալիս է իրավունք սահմանված քանակով տվյալ ապրանքի արտահանման ~~և (կամ)~~ կամ ներմուծման համար) կամ լիազորված մարմնի թույլտվությամբ՝ մնացած բոլոր դեպքերում՝ սույն օրենքով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով սահմանված կարգով:

Վայրի կենդանիների, դրանց արգասիքների, կենդանաբանական հավաքածուների կամ առանձին նմուշների Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման ~~և~~/կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման թույլտվության տրամադրման համար վճարվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով:»:

Հոդված ~~14~~ 15. Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) «գ» կետից հանել «և գեղագիտական» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ե» կետ՝

«ե) առողջապահական , վերարտադրության կազմակերպման նպատակով».

8) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս.

«Արգելվում է սույն հոդվածի առաջին մասի կետերով սահմանված օգտագործման նպատակներից բացի այլ նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը (վայրի բնությունից վերցնելը):»:

Հոդված ~~15~~ 16. Օրենքի 24-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս.

«Կենդանական աշխարհի օբյեկտների գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով օգտագործման պայմանագրերի կնքման համար գանձվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով:»:

Հոդված ~~16~~ 17. Օրենքի 25-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածները շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Հոդված 25. Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը սոցիալական նպատակներով

Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը սոցիալական նպատակներով վճարովի է (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի):

Կենդանական աշխարհի օբյեկտների սոցիալական նպատակներով օգտագործումն իրականացվում է լիազորված մարմնի հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Պայմանագրեր կնքելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Կենդանական աշխարհի օբյեկտների սոցիալական նպատակներով օգտագործման պայմանագրերի կնքման համար գանձվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով:

Հոդված 26. Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը բնապահպանական, գիտահետազոտական, կրթական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով

Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը գիտահետազոտական և կրթական նպատակներով անվճար է:

Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը բնապահպանական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով վճարովի է:

Կենդանական աշխարհի օբյեկտների բնապահպանական, գիտահետազոտական, կրթական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով օգտագործումն իրականացվում է լիազորված մարմնի հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

Պայմանագրեր կնքելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհի օբյեկտների բնապահպանական, գիտահետազոտական, կրթական, առոջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով օգտագործման պայմանագրերի կնքման համար գանձվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով:

Հոդված 27. Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների օգտագործումը

Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների օգտագործումը թույլատրվում է բացառիկ դեպքերում՝ գիտահետազոտական, բնապահպանական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով՝ լիազորված պետական մարմնի հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների օգտագործումը գիտահետազոտական նպատակներով անվճար է:

Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների օգտագործումը բնապահպանական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով վճարովի է:

Պայմանագրեր կնքելու կարգը սահմանում է լիազորված մարմինը:

Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների օգտագործման պայմանագրերի կնքման համար գանձվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով:»:

Հոդված ~~17~~ 18. Օրենքի 27.1-~~րդ~~ ին հոդվածում՝

5) 1-ին մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիները համարակալվում և նույնականացվում են՝ հաշվի առնելով դրանց տեսակային առանձնահատկությունները:»:

6) 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

7) 3-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«Անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիները, պահվում են ֆիզիկական ~~և~~ կամ իրավաբանական անձանց կողմից սույն օրենքի և ~~դրանից բխող ենթաօրենսդրական նորմատիվ~~ այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան:

Անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ (բացառությամբ լիազորված մարմնի կողմից հաստատած պահման թույլտվություն չպահանջող վայրի կենդանիների ցանկում ընդգրկված կենդանիներ) պահելը իրականացվում է լիազորված մարմնի կողմից տրամադրված թույլտվության հիման վրա: Թույլտվության տրամադրման կարգը սահմանում է լիազորված մարմինը: Անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու թույլտվություն տրամադրելու համար գանձվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով:

Հայաստանի Հանրապետությունում առանց լիազորված մարմնի թույլտվության արգելվում է ֆիզիկական ~~և~~ կամ իրավաբանական անձանց կողմից վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելը, բացառությամբ լիազորված մարմնի կողմից հաստատած պահման թույլտվություն չպահանջող վայրի կենդանիների ցանկում ընդգրկված կենդանիների:»:

8) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Անազատ և կիսաազատ պայմաններում լիազորված մարմնի թույլտվությամբ պահվող վայրի կենդանիները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիները սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված անձանց կողմից յուրաքանչյուր տարի հաշվառվում և հաշվառման տվյալները տրամադրվում են լիազորված մարմնին՝ համաձայն լիազորված մարմնի կողմից հաստատված կարգի: Հաշվառման տվյալները ենթակա են պարտադիր հրապարակման լիազորված մարմնի կայքէջում տեղադրելու միջոցով:».

5) 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~18~~ 19. Օրենքի 27.2-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիները կարող են օգտագործվել սույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված օգտագործման տեսակներին համապատասխան:».

2) 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Կիսաազատ պայմաններում պահվող՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների, սկսած երկրորդ կենսունակ սերնդից օգտագործումն իրականացվում է լիազորված մարմնի թույլտվությամբ՝ սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Կիսաազատ պայմաններում պահվող՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների, սկսած երկրորդ կենսունակ սերնդից օգտագործման նպատակով լիազորված մարմնի կողմից տրամադրված թույլտվության համար գանձվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով և չափով:

Կիսաազատ պայմաններում պահվող՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիները, սկսած երկրորդ կենսունակ սերնդից օգտագործման ենթակա քանակությունը, համարվում է օգտագործողի սեփականությունը և կարող է օգտագործվել սույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված օգտագործման տեսակներին համապատասխան:

Օրինական ճանապարհով ձեռք բերված անազատ պայմաններում պահվող վայրի կենդանիները համարվում են ձեռք բերողի սեփականությունը:».

9) 4-րդ և 7-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել.

10) հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «8.», «9.», «10.» մասեր՝

« 8. Վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ (բացառությամբ լիազորված մարմնի կողմից հաստատած պահման թույլտվություն չպահանջող վայրի կենդանիների ցանկում ընդգրկված կենդանիների) կարող են ձեռք բերել լիազոր մարմնի կողմից անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ պահելու թույլտվություն ստացած իրավաբանական ~~և~~ կամ ֆիզիկական անձինք, կամ այդպիսի թույլտվություն ստացած իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ վայրի կենդանիներ պահելու պայմանագիր ունեցող իրավաբանական ~~և~~ կամ ֆիզիկական անձինք:

9. Վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների առք ու վաճառքն իրականացվում է վայրի կենդանիների կենսաբանական, անհատական և տեսակային առանձնահատկություններից բխող ու գոյատևման համար անհրաժեշտ կարիքները բավարարող պայմաններում: Վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների, դրանց արգասիքների և մասերի առք ու վաճառքն իրականացվում է լիազորված մարմնի կողմից սահմանված պայմաններն ու պահանջները բավարարող վայրերում:

10. Վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեղափոխումն իրականացվում է վայրի կենդանիների կենսաբանական, անհատական և տեսակային առանձնահատկություններից բխող ու գոյատևման համար անհրաժեշտ կարիքները բավարարող փոխադրամիջոցներով:»:

Հոդված ~~19~~ 20. Օրենքի 32-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 32. Կենդանական աշխարհի մասին օրենսդրության պահանջների կատարման վերահսկողությունը**

Կենդանական աշխարհի մասին օրենսդրության պահանջների կատարման վերահսկողությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:»:

Հոդված ~~20~~ 21. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված ~~21~~ 22. Անցումային դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում, անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահող իրավաբանական ~~և~~ կամ ֆիզիկական անձիք (անկախ տվյալ կենդանու ձեռքբերումը հավաստող փաստաթղթի առկայությունից) պարտավոր են դիմել լիազորված մարմին անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու թույտվություն ստանալու և դրանց հաշվառման տվյալները լիազորված մարմնին տրամադրելու համար:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում, անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահող իրավաբանական ~~և~~ կամ ֆիզիկական անձանց կողմից լիազորված պետական մարմնից դրանց պահման թույլտվություն չստանալու կամ դրանց հաշվառման տվյալները լիազորված մարմնին չտրամադրելու դեպքում նրանց գործունեությունը համարվելու է առանց թույլտվության իրականացրած գործունեություն և կիրառվելու են օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ:

3. ~~Սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «գ1», «գ2» կետերով, 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումներում փոփոխությունները և լրացումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում,~~

Սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո Կառավարությունը ընդունում է՝

6) գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգը՝ մեկ տարվա ընթացքում,
7) սոցիալական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգը՝ վեց ամսվա ընթացքում,
8) կենդանիների թվաքանակի կարգավորման միջոցառումների անցկացման կարգը՝ երկու տարվա ընթացքում,
9) վայրի կենդանիների ազատ պայմաններում վերաբնակեցման կարգը՝ երկու տարվա ընթացքում,
10) բնապահպանական, գիտահետազոտական, կրթական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգը՝ երեք տարվա ընթացքում:

~~4. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «գ3», «գ4» և «գ5» կետերով սահմանված կարավորումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու տարվա ընթացքում:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-050-23.09.2021-ՏՏԳՇ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ					
1.	ՀՀ Կառավարություն	Նախագծի վերնագիր	Վերնագրից հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ Նույն դիտարկումը վերաբերելի է նաև «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրին:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ Կառավարություն	1-ին հոդված	1-ին հոդվածում «Կենդանական աշխարհի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) լրիվ անվանման հիշատակումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին՝ հանելով «Հայաստանի Հանրապետության» բառերը: Նույն դիտարկումը վերաբերելի է նաեւ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում օրենքի լրիվ անվանման հիշատակմանը:	Ընդունվել է	Ընդունվել է

3.	**ՀՀ Կառավարություն**	**2-րդ հոդվածի 3-րդ մաս**	2-րդ հոդվածի 3-րդ մասում՝ 1. 1-ին պարբերության «հետապնդելու» բառը փոխարինել «ստանալու» բառով, 2. 2-րդ պարբերության «աշխարհի» բառից հետո լրացնել «օբյեկտների» բառը, 3. 3-րդ պարբերության՝ 1) «օբյեկտների օգտագործում՝» բառերից հետո լրացնել «վտանգված, հազվագյուտ կամ կենդանական աշխարհի առանձին տեսակների» բառերը, 2) «իրականացման միջոցով բառերից հետո հանել «վտանգված, հազվագյուտ կամ կենդանական աշխարհի առանձին տեսակների օգտագործում՝ դրանց» բառերը փոխարինել «դրանց օգտագործում՝» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	**ՀՀ Կառավարություն**	**2-րդ հոդվածի 5-րդ մաս**	5-րդ մասում «սպորտային» բառերց հետո մնացած տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ « ձկնորսության կամ սիրողական ձկնորսության, կամ սպորտային որսի կամ սիրողական որսի կամ հաղթանշանային որսի իրականացում անձնական կարիքների համար՝ առանց շահույթ ստանալու:»:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	**ՀՀ Կառավարություն**	Նախագիծը լրացվել է նոր 3-րդ հոդվածով	**«Հոդված 3.** Օրենքի 2-րդ հոդվածի «Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ» բառերը փոխարինել «այլ իրավական ակտերով:» բառերով:» Դրանով պայմանավորված հոդվածների համարակալումը փոխել է:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	**ՀՀ Կառավարություն**	4-րդ հոդված	1-ին մասից՝ 1) հանել «զ3» բառերը, 2) «ե1» կետում «և/կամ» բառերը փոխարինել «կամ» բառով, 3) «զ2» կետում սահմանում բառից հետո լրացնել «և	Ընդունվել է	Ընդունվել է

			տրամադրում» բառերը, 4) հանել «զ3) վայրի կենդանիների ազատ պայմաններում վերաբնակեցման թույլտվության տրամադրում.» կետը:		
7.	**ՀՀ Կառավարություն**	7-րդ հոդված	1-ին մասի՝ 5) «առաջ» բառը փոխարինել «հետո» բառով, 6) «համապատասխան մասնագիտական կարողություններ ունեցող» բառերը փոխարինել «, որոնց կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան կամ նպատակները ներառում են կենդանական աշխարհի օբյեկտների ուսումնասիրությունը կամ որոնք պայմանագրեր են կնքել կենդանական աշխարհի օբյեկտների ուսումնասիրության ոլորտում մասնագիտական որակավորում ունեցող անձանց հետ (ներառյալ աշխատանքային պայմանագրերը). բառեր,»	Ընդունվել է	Ընդունվել է
8.	**ՀՀ Կառավարություն**	9-րդ հոդված	1-ին մասում «գիտական և մասնագիտական կազմակերպությունների եզրակացությունները» բառերը փոխարինել «սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված սուբյեկտների կողմից ներկայացված ուսումնասիրության արդյունքները» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
9.	**ՀՀ Կառավարություն**	11-րդ հոդված	«ցանկով հաստատված» բառերը փոխարինել «կողմից հաստատված ցանկում ընդգրկված » բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
10.	**ՀՀ Կառավարություն**	12-րդ հոդված	«Իրավաբանական և» բառերի փոխարեն լրացնել «Կենդանաբանական հավաքածուներ ունեցող իրավաբանական կամ» բառերով, ինչպես նաև «տրամադրել» բառից հետո լրացնել «իրենց մոտ պահվող» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
11.	**ՀՀ Կառավարություն**	13-րդ հոդված	1-ին մասում՝ 1) «կոնվենցիայի» բառից հետո լրացնել	Ընդունվել է	Ընդունվել է

			(այսուհետ՝ կոնվենցիա) բառերը, 2) «վայրի» բառից հետո լրացնել «կենդանական» բառը, 3) «և/կամ բառերը փոխարինել «կամ» բառով, 2-րդ մասի ողջ տեքստում «և/կամ», ինչպես նաև «և(կամ)» բառերը փոխարինել «կամ» բառով:		
12.	**ՀՀ Կառավարություն**	14-րդ հոդված	2-րդ մասով լրացվող «ե» կետում «վերարտադրություն» բառից առաջ լրացնել «առողջապահական» բառը	Ընդունվել է	Ընդունվել է
13.	**ՀՀ Կառավարություն**	17-րդ հոդված	Հոդվածի վերնագրի «27. 1-րդ» բառը փոխարինել «27. 1-ին» բառով, 3-րդ մասի՝ 1) 1-ին պարբերության «ֆիզիկական» բառից հետո «և» բառը փոխարինել «կամ» բառով, «դրանից բխող ենթաօրենսդրական նորմատիվ» բառերը փոխարինել «այլ» բառով, 3) 3-րդ պարբերության «ֆիզիկական» բառից հետո «և» բառը փոխարինել «կամ» բառով	Ընդունվել է	Ընդունվել է
14.	**ՀՀ Կառավարություն**	18-րդ հոդված	5-րդ մասում «իրավաբանական» բառից հետո շարադրել հետևյալ խմբագրությամբ «կամ ֆիզիկական անձինք, կամ այդպիսի թուլտվություն ստացած իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ վայրի կենդանիներ պահելու պայմանագիր ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք:» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
15.	**ՀՀ Կառավարություն**	21-րդ հոդված	1-ին և 2-րդ կետերում «իրավաբանական» բառից հետո «և» փոխարինել «կամ» բառով, 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3. Սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո Կառավարությունը ընդունում է՝	Ընդունվել է	Ընդունվել է

			1) գյուղատնտեսական և արդյունագործական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգը՝ մեկ տարվա ընթացքում, 2) սոցիալական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգը՝ վեց ամսվա ընթացքում, 3) կենդանիների թվաքանակի կարգավորման միջոցառումների անցկացման կարգը՝ երկու տարվա ընթացքում, 4) վայրի կենդանիների ազատ պայմաններում վերաբնակեցման կարգը՝ երկու տարվա ընթացքում, 5) բնապահպանական, գիտահետազոտական, կրթական, առողջապահական և վերարտադրության կազմակերպման նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման կարգը՝ երեք տարվա ընթացքում:». 4-րդ կետը հանել:		
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ					
16.	**ՀՀ Կառավարություն**	1-ին հոդված	1-ին հոդվածի վերնագրում «Վարչական» բառից առաջ լրացնել «1985 թվականի դեկտեմբերի 6-ի» բառերը, «Հանրապետության» բառից հետո հանել «1985 թվականի դեկտեմբերի 6-ի» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
17.	**ՀՀ Կառավարություն**	1-ին հոդված	Լրացվող՝ «Հոդված 87.2», «Հոդված 87.3» և «Հոդված 88.1» մասերի առաջին պարբերություններով նախատեսված պատասխանատվության միջոցները տարանջատել տարբերակների սահմանելով երկու պարբերությամբ շարադրելով հետևյալ խմբագրությամբ՝ « առաջացնում է նախազգուշացում:	Ընդունվել է	Ընդունվել է

			Նույն արարքը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:		
18.	**ՀՀ Կառավարություն**	1-ին հոդված	Լրացվող հոդվածներ՝ 87.3-ի վերնագրում և 1-ին պարբերությունում «իրավաբանական», 88.1-ի վերնագրում «ֆիզիկական» և «պահելը», առաջին պարբերության «ֆիզիկական», 3-րդ պարբերության «իրավաբանական», 88.2-ի վերնագրում և 1-ին պարբերությունում «ֆիզիկական», 88.3-ի վերնագրում և 1-ին պարբերությունում «ֆիզիկական», 90.1-ի վերնագրում և 1-ին պարբերությունում «ֆիզիկական», բառերից հետո «և» բառը փոխարինել «կամ» բառով, 90.1-ում վերնագրում և 1-ին պարբերությունում «արտահանումը» բառից հետո «և/կամ» բառը փոխարինել «կամ» բառով	Ընդունվել է	Ընդունվել է
19.	**ՀՀ Կառավարություն**	1-ին հոդված	Լրացվող հոդվածներ 88.1-ի , 88.2-ի, 88.3-ի, 90.1-ի՝ 2-րդ պարբերություններում «պաշտոնատար» բառը փոխարինել «իրավաբանական» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
20.	**ՀՀ Կառավարություն**	1-ին հոդված	Լրացվող 88.3-րդ հոդվածի՝ վերնագրից և 1-ին պարբերությունից հանել «հողառաջացում» բառը, վերնագրում «օգտագործումը» բառից հետո լրացնել «կամ ոչ նպատակային օգտագործումը» բառերը, 1-ին պարբերությունը «օգտագործումը» բառից հետո լրացնել «կամ օգտագործման պայմանագրով	Ընդունվել է	Ընդունվել է

			չսահմանված նպատակներով օգտագործումը՝» բառերով:		
21.	**<< Կառավարություն**	Հոդված 2	Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ հոդվածով՝ «**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի առաջին հոդվածով լրացվող՝ 1) 87.2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ե3» կետով սահմանված կարգի ընդունումից հետո, 2) 87.2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ե2» կետով սահմանված կարգի ընդունումից հետո, 3) 88.1-ին հոդվածի, որն ուժի մեջ է մտնում «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ1» և «գ1» կետերով սահմանված կարգի ընդունումից հետո, 4) 88.2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «գ3» կետով սահմանված կարգի ընդունումից հետո, 5) 88.3-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 5-րդ հոդվածի «գ1», «գ2» և «գ5» կետերով սահմանված կարգի ընդունումից հետո, 6) 90.1-ին հոդվածի, որն ուժի մեջ է մտնում «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 6-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

			հոդվածի 1-ին մասի «ե1» կետով սահմանված կարգի ընդունումից հետո:»:		
«Հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ					
22.	**ՀՀ Կառավարություն**	Վերնագիր	Օրենքի նախագծի վերնագրից հանել «Հաստանի Հանրապետություն» բառերը, վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով՝ նկատի ունենալով Նախագծի 1-ին հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթները:	Ընդունվել է	Ընդունվել է
23.	**ՀՀ Կառավարություն**	**1-ին հոդված**	1-ին հոդվածի վերնագրում «Հայաստանի» բառից առաջ լրացնել «2016 թվականի հոկտեմբերի 4-ի» բառերը, «Հանրապետության» բառից հետո հանել «2016 թվականի հոկտեմբերի 4-ի» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ					
24.	**ՀՀ Կառավարություն**	**Վերնագիր**	Օրենքի նախագծի վերնագրից հանել «Հաստանի Հանրապետություն» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
25.	**ՀՀ Կառավարություն**	**1-ին հոդված**	1-ին հոդվածի վերնագրում «Պետական» բառից առաջ լրացնել «1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186» բառերը, «Հանրապետության» բառից հետո հանել «1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
26.	**ՀՀ Կառավարություն**	**1-ին հոդված**	Լրացվող 19.13 հոդվածում «ա., բ., գ., դ.» տառերի փոխարեն նշել «1), 2), 3), 4)» թվերը	Ընդունվել է	Ընդունվել է
27.	**ՀՀ Կառավարություն**	**2-րդ** հոդված	2-րդ հոդվածում «պածտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «2023 թվականի հունվարի 1-ից» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է